ՍԱՀՄԱՆ



70 տարի շարունակ «Օձն իր պորտով, հավքն իր թևով» չէր կարող խախտել ԽՍՀՄ սահմանը: Բայց այսօր այդ կայսրությունը կործանվել է, նրա մաս կազմող հանրապետությունները զբաղված են նախկին գերտերության ժառանգության ալան-թալանով: Իսկ ի՞նչ է կատարվում նախկին ԽՍՀՄ-ի, իսկ այսօր արդեն անկախ Հայաստանի Հանրապետության սահմանում, ո՞ւմ են ենթարկվում սահմանապահները, ո՞ւմ դրոշի տակ են ծառայում. այս և մեր հայրենակիցներին հուզող այլ հարցերի պատասխանն ստանալու նպատակով մեր թղթակիցը հանդիպեց Թալինի, Բաղրամյանի, Արմավիրի և Էջմիածնի շրջաններում տեղակայված սահմանապահ ուղեկալների հրամանատար, փոխգնդապետ ՎԻԿՏՈՐ ԻՎԱՆՈՎԻՉ ԿՈՐԵՆԿՈՅԻՆ և հարցազրույց ունեցավ նրա հետ:

— Պր. փոխգնդապետ, ի՞նչն է այսօր ամենից շատ հուզում սահմանապահներին:

— Նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ստեղծված շփոթ իրավիճակը իր ազդեցությունն է թողնում նաև սահմանապահ զորքերի վրա: Սպաներն ու շարքայինները հաճախ են հարց բարձրացնում, թե ինչո՞ւ ենք մենք այստեղ գտնվում, ո՞ւմ սահմաններն ենք պաշտպանում և այլն, և այլն: Առայժմ մեզ հաջողվում է բացատրել անձնակազմին, որ եթե մեզ հրամայված է աչքի լույսի պես պահպանել այս սահմանը, ապա մեր պարտքը այն կատարելն է: Եվ առ այսօր մեզ մոտ դասալքության դեպքեր չկան:

— Պր. Կորենկո, դուք ազգությամբ ուկրաինացի եք. ինչպե՞ս եք վերաբերվում Ուկրաինայի պրեզիդենտ Կրավչուկի այն հայտարարությանը, որ Հայաստանում և Ադրբեջանում ծառայող բոլոր ուկրաինացիները անմիջապես պետք է վերադառնան հայրենիք:

— Այդ հրամանը անհնար է կատարել, և ես չեմ պատրաստվում ենթարկվել դրան: Որովհետև մեր ուղեկալներում ծառայողների կեսը ռուսներ են, մյուս կեսից մի քիչ պակաս՝ ուկրաինացիներ: Եթե ուկրաինացիներս թողնենք ու հեռանանք, դրանով իսկ թշնամություն կսերմանենք ոչ միայն հայ ժողովրդի, այլև մեր ռուս ընկերների մոտ: Այնպես որ, այդ հրամանի կատարումը բացասաբար կանդրադառնա և՛ Հայաստանի, և՛ Ուկրաինայի, և՛ թե Ռուսաստանի վրա:

Ուրիշ հարց է, որ այսուհետև սահմանի պահպանման պարտականությունը կամաց-կամաց հայ ժողովուրդը ինքը պետք է վերցնի իր վրա:

Ի դեպ, թեև այսօր անկախ Հայաստանը սահման ունի Թուրքիայի հետ, բայց այս երկու երկրների միջև ընդհանուր սահմանի մասին ընդունված փաստաթղթեր չկան, և մեր ներկայությունն այստեղ պարտադիր է դառնում:

— Ուրեմն ո՞ւմ սահմաններն եք պաշտպանում:

— Հայաստանի, որը 74 տարի կայսրության մաս էր կազմում, իսկ այսօր Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկիր է: Առայժմ այսքանով սահմանափակվենք:

— Գուցե հարցը այսպես ձևակերպենք. ո՞ւմ դրոշի տակ են այսօր ծառայում սահմանապահները:

— Շատ ցավոտ հարց եք տալիս: Մենք ծառայում ենք անկախ Հայաստանում, բայց ֆինանսավորվում ենք Ռուսաստանի կողմից: Բացի այդ, զորամասերում ծառայում են այսօր արդեն անկախ պետությունների ներկայացուցիչներ: Բարձրացնել Հայաստանի, Ռուսաստանի կամ մեկ այլ պետության դրոշը, կնշանակի վիրավորել մյուս հանրապետությունների ներկայացուցիչներին:

Իմ աշխատասենյակի պատին փակցված է Հայաստանի դրոշը: Բայց այն չենք կարող բարձրացնել զորամասերում. դրա համար էլ դեռ նախկին ԽՍՀՄ-ի դրոշն ենք ժամանակավորապես բարձրացնում:

Իմ խորին համոզմամբ կարևորը ոչ թե այս կամ այն պետության դրոշի առկայությունն է, այլ սահմանապահների անբասիր ծառայությունը:

— Իսկ ինչպիսի՞ն են սահմանապահների և տեղական բնակչության փոխհարաբերությունները:

— Տեղացիների և կանաչ ուսադրավորների՝ տարիների ընթացքում կուտակված բարեկամությունը շարունակվում է: Թեև հանրապետությունը գտնվում է տնտեսական ծանր կացության մեջ, բայց դեռ դեպք չի եղել, երբ ինչ-որ հարցով դիմենք Արմավիրի կամ մյուս շրջանների իշխանություններին և աջակցություն չստանանք: Որովհետև բոլորն էլ հասկանում են, որ սահմանի անվտանգությունը պետության երաշխիքն է:

— Պր. Կորենկո, անկեղծորեն ասած, մեզ այնպիսի տեղեկություններ էին հասնում, որ սահմանապահ ուղեկալներում գործող սարքավորումները ապամոնտաժվում են, տեխնիկան փչացնում են և այլն, և այլն: Բայց այցելելով մի քանի ուղեկալներ, մենք համոզվեցինք, որ ամեն ինչ կարգին է:

— Չգիտեմ, թե դա ում է ձեռնտու, բայց բացահայտորեն մեզ փորձում են ստիպել բաշվել մեր «ազգային բնակարանները»: Բայց ուզում եմ անկախ Հայաստանի բնակչությանը երաշխավորել, որ սահմանապահ ուղեկալներից և ոչ մի սարքավորում ու տեխնիկա դուրս չեն հանվում, որ մենք առաջվա պես աչալրջորեն հսկում ենք հանրապետության անդորրը:

— Ի դեպ, պր. փոխգնդապետ, մասսայական ինֆորմացիայի միջոցները վերջերս հայտնում էին, որ Թուրքիան իր զորքերը մոտեցնում է Հայաստանի սահմաններին...

— Դրանք հերթական զորավարժություններ էին: Մենք ուշի-ուշով հետևում էինք դրանց, և կարող եմ ամենայն պատասխանատվությամբ հայտարարել, որ սահմանը հանգստանալու ոչ մի առիթ չկա:

Ի դեպ, կենտրոնական լրատվական միջոցները՝ այդ նույն «Լուրերն» ու «Նորությունները», հաճախ այնպիսի դրամատիկ հաղորդումներ են տալիս Հայաստանի մասին, որ մեր զինվորների ծնողների մոտ տպավորություն է ստեղծվում, թե հանրապետությունում պատերազմ է: Շատ հաճախ շարքայինները իրենք իրենց ծնողներին գրում են նամակներում ստիպված են լինում խոստովանել, որ ծառայության համար ավելի բարենպաստ պայմաններ, քան Հայաստանի սահմանապահ ուղեկալներում են, դժվար է պատկերացնել:

— Մեր երկրում այսօր էլեկտրաէներգիայի և սննդամթերքի պակաս է զգացվում: Ինչպե՞ս է դա արտացոլվում սահմանապահ ուղեկալների վրա: Չէ որ սահմանի երկայնքով ձգված ամբողջ սարքավորումները աշխատում են էլեկտրաէներգիայով:

— Պետք է խոստովանեմ, որ սննդամթերքի հարցը 90 տոկոսով լուծված է (մի քիչ կարագի պակասություն ունենք միայն): Իսկ ինչ վերաբերում է էլեկտրաէներգիային, ապա թեև շրջանների կառավարները հնարավորին չափ օգնում են, համենայնդեպս ուղեկալներում շարժիչներ ենք տեղադրել, որոնց շնորհիվ բոլոր սարքավորումները անխափան են գործում:

Մեկ անգամ ևս ուզում եմ հավաստիացնել, որ մեր ուղեկալներում կարգապահությունը շատ բարձր մակարդակի վրա է դրված, բոլոր սարքավորումները գործում են անխափան, անձնակազմը իր արբանյան պարտքն է կատարում, և կմնանք այստեղ այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է:

Հայաստանի սահմանը վստահելի ձեռքերում է...

Վ. ԳՈՐՅԱՆ